Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ ***http://www.armin.am***

էլ. փոստ՝ ***info@armin.am***

«Պատմական հուշարձանների և կուլտուրական մյուս արժեքների պահպանության նկատմամբ հոգատարությունը Հայկական ՍՍՀ քաղաքացիների պարտքն ու պարտականությունն է»:

(ՀՍՍՀ սահմանադրություն, հոդված 66)

Եղվարդը՝ Հայաստանի հնագույն բնակավայրերից մեկը (այժմ Նաիրիի շրջկենտրոնը), հարուստ է տարբեր ժամանակաշրջանի ու տիպի արժեքավոր ճարտարապետական հուշարձաններով: Ավանի կենտրոնում գտնվում են միանավ եկեղեցու (V դ.) ավերակները. պահպանվել է միայն պատի շարվածքի ստորին շարքը: Եկեղեցին ունի արևելք-արևմուտք առանցքի ուղղությամբ խիստ ձգված ուղղանկյուն հատակագիծ (9,1×23,5 մ): Չորս մուտքերից մեկը արևմուտքից է, մյուս երեքը՝ հարավից: Հյուսիսային պատի ելուստը ու հարավ-

Զորավար եկեղեցու հյուսիսային հատվածի ներքին տեսքը

Զորավար եկեղեցին, հյուսիսային աբսիդներից մեկը

արևմտյան անկյունում երեքքառորդանի սյան խարիսխը վկայում են սյունասրահի երբեմնի գոյության մասին: Աղոթասրահն արևելյան կողմում ավարտվում է բեմի կիսաշրջանաձև աբսիդով: Պահպանվել են նույնպես թաղակիր կամարի որմնասյան խարիսխները՝ հնավանդ տրամատով: Երևանավ բազիլիկը գտնվում

է միանավ եկեղեցուց դեպի արևմուտք, կառուցված է տեղական տուֆի մաքուր տաշած խոշոր քարերից: Բազիլիկի խոշոր ծավալը (հատակագծի չափերն են 14,1×27,3 մ) բարձրանում է եռաստիճան որմնախարիսխի վրա: Դահլիճը 3 նավի է բաժանվում չորս զույգ T-աձև մույթերով: Միջին նավը բավական լայն է կողայիններից, մոտ երեք անգամ: Եղվարդի բազիլիկն ունի մի առանձնահատկություն, որը չի հանդիպում հայկական նմանատիպ մյուս հուշարձաններում՝ կողքի նավերը արևելյան կողմում ավարտվում են դեպի դահլիճը նայող փոքրիկ աբսիդներով: Եկեղեցու գլխավոր բեմի աբսիդը (այժմ չի պահպանվել) հնգանիստ եզրագծով դուրս է եկել շենքի ուղղանկյուն ծավալից: Շենքի պարագծով ձգվում է մեկ տողանի խոշոր արձանագրություն՝ գրված 660 թ.: Բազիլիկն ունի չոթ մուտք՝ երեքական հարավային և հյուսիսային պատերում և գլխավոր՝ արևմտյան կողմում: Հարավային ճակատի միջին դուռն աչքի է ընկնում գեղեցիկ ձևավորված շքամուտքով: Իր ճարտարապետությամբ և հարդարանքով Եղվարդի բազիլիկը պատկանում է Հայաստանի V դ. հուշարձանների թվին: Սակայն VI-VII դդ. (հավանաբար Մովսես Եղվարդեցի կաթողիկոսի օրոք) բազիլիկը հիմնովին վերակառուցվել է՝ սկզբնական փայտե ծածկը փոխարինվել է քարե թաղերով, որի համար կառուցվել են հզոր մույ-



Եռանավ բազիլիկի հարավային շքամուտքի մանրամաս

Ս. Աստվածածին եկեղեցի, ընդհանուր տեսքը արևմուտքից

Ս. Աստվածածին եկեղեցու հարավային հակատի լուսամուտը



Ս. Աստվածածին եկեղեցու արևելյան հակատի մանրամաս

թեր: Այդ վերակառուցումը պարզ երևվում է նախնական ծածկի որմնապուների և նոր մույթերի միմյանց չհամապատասխանող տեղադրությամբ:

Զորավար բազմաբսիդ եկեղեցին գտնվում է Եղվարդից մոտ 2 կմ հեռու: Ըստ պատմիչների՝ 661—685 թթ. այն կառուցել է Հայաստանի կառավարիչ Գրիգոր Մամիկոնյանը: Շենքի ստորին մասը (պահպանվել է միայն նրա հյուսիսային կեսը) արտաքուստ տասնութ նիստանի է, ութ խոշոր եռանկյունի խորշերով, իսկ վերին մասը գմբեթն է, դրսից բազմանիստ, ներսից գլանաձև թմբուկով: Ինտերյերում, աբսիդների միջև, երեքքառորդանի սյուների վրա նստում են կամարներ, որոնք աբսիդների կամարների հետ կրում են գմբեթի թմբուկը: Գմբեթակիր քառակուսուց գմբեթին անցումն իրականացված է առագաստներով: Հուշարձանի հարդարանքը՝ երկրաչափական ու բուսական զարդամոտիվներով մշակված քիվերը և լուսամուտների երեսակալները, արտաքին խորշերի միջև կիսասյուները հարընտացնում են այս ոչ մեծ հուշարձանի մոնումենտալ կերպարը:

Եղվարդի կենտրոնում կանգուն է ս. Աստվածածին (1301 թ.) եռաստիճան եկեղեցի-զանգակատունը: Նրա երկրորդ հարկն ունի համարյա խաչաձև հատակագիծ, աբսիդի փոխարեն ստալակտիտային վերջավորությամբ խորշով: Քարե պահունակային աստիճաններ կան միայն երկրորդ հարկում, այնտեղ բարձրանալու համար դրվել է փայտե սանդուղք: Կոնաձև ծածկով երրորդ հարկը 12 պատուհանի ռոտոնդ է: Եկեղեցու ճակատները աչքի են ընկնում արտաքին հարդարանքի բացառիկ ճոխությամբ: Եղվարդի եռաստիճան եկեղեցին միջնադարյան Հայաստանի նույնատիպ հուշարձաններից լավագույններից մեկն է և ամենալավ պահպանվածը: Ռոտոնդը հիմնովին վերանորոգվել է 1972 թ.:



Ս. Աստվածածին եկեղեցու հարավային ճակատի բարձրաքանդակի մանրամաս

ԳՄԴ 63. 3(2Հ) 6
Հ 863

Հասրաթյան Մուրադ Մարգարի
ԵՂՎԱՐԴ

Асратян Мурад Маркарович
ЕГВАРД
(На армянском языке)
Издательство «Айастан»
Ереван — 1984

Հ $\frac{0505040000}{701\ (01)\ 84}$ պատվեր

© ՀՍՍՀ պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության ընկերություն, 1984

Մասն. խմբագիր՝ **Վ. Մ. Հարությունյան**
Խմբագիր՝ **Է. Դ. Շահնազարյան**
Նկարիչ՝ **Օ. Ս. Ասատրյան**
Գեղ. խմբագիր՝ **Ս. Ս. Մկրտչյան**
Տեխն. խմբագիր՝ **Կ. Ս. Սարգսյան**
Վերստուգող սրբագրիչ՝ **Լ. Ս. Սահակյան**

ИБ—2/Կ
Հանձնված է շարվածքի 3. 09. 1984 թ.:
Ստորագրված է տպագրության 19. 12. 1984 թ.:
Ֆորմատ՝ $70\times108^{1}/_{32}$:
Թուղթ՝ «Կավճապատ» 0,35 տպագ. մամ., հրատ՝ 0,35 մամ: Պատվեր 2504
ՎՖ 09509: Տպաքանակ՝ 10000:
Գինը՝ 10 կոպ.:
«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:
Издательство «Айастан», Ереван-9, ул. Теряна, 91.
ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան Ալավերդյան 65:
Типография № 1 Госкомитета Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли. Ереван, ул. Алавердяна, 65.